ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԷՆԵՐԳԵՏԻԿ ԵՆԹԱԿԱՌՈՒՑՎԱԾՔՆԵՐԻ ԵՎ ԲՆԱԿԱՆ ՊԱՇԱՐՆԵՐԻ

ՆԱԽԱՐԱՐԻ

ՀՐԱՄԱՆԸ

«13» Հոկտեմբերի 2017 թվականի № 141-Ա

ՕԳՏԱԿԱՐ ՀԱՆԱԾՈՅԻ ԱՐԴՅՈՒՆԱՀԱՆՄԱՆ ԻՐԱՎՈՒՆՔԻ ՏՐԱՄԱԴՐՄԱՆ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով Հայաստանի Հանրապետության ընդերքի մասին օրենսգրքի 51-րդ հոդվածի, 54-րդ հոդվածի, 55-րդ հոդվածի 1-ին մասի պահանջներով, հիմք ընդունելով հանքավայրի շահագործման նախագծի 2017 թվականի օգոստոսի 31-ի «Շրջակա միջավայրի վրա ազդեցության փորձաքննության» թիվ ԲՓ 78 և 2017 թվականի հուլիսի 28-ի «Արտադրական վտանգավոր օբյեկտի նախագծային փաստաթղթերի տեխնիկական անվտանգության» թիվ 1715 փորձաքննությունների դրական եզրակացությունները, հաշվի առնելով «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի 2017 թվականի սեպտեմբերի 12-ի թիվ Ֆ-262/17 գրությունը, «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊ ընկերության 2017 թվականի հունիսի 4-ի թիվ 04/1 գրությունը և Ընդերքի գործակալության պետի զեկուցագիրը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. «ԴՈՐՈԺՆԻԿ» ՍՊ ընկերությանը 25 տարի ժամկետով տրամադրել օգտակար հանածոյի արդյունահանման թիվ ՇԱԹ-29/570 թույլտվությունը՝ Սպանդարյանի տուֆերի և բազալտի հանքավայրի 3-րդ (բազալտի) տեղամասի՝ 1.X=4452195.4 Y=8450823.4, 2.X=4452245.9 Y=8450757.5, 3.X=4452341.9 Y=8450780.1, 4.X=4452378.9 Y=8450959.7, 5.X=4452230.2 Y=8451014.9, 6.X=4452192.0 Y=8450997.8 (տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված տարածքում արդյունահանում կատարելու համար, հատկացնելով՝ 420 824 մ^3 բազալտի պաշար և լեռնահատկացման թիվ L-570 լեռնահատկացման ակտը՝ 1.X=4452245.9 Y=8450757.5, H=1002 (h=-12), 2.X=4452341.9 Y=8450780.1, H=1009 (h=-19), 3.X=4452378.9 Y=8450959.7, H=1008 (h=-18), 4.X=4452230.2 Y=8451014.9, H=990 (h=0), 5.X=4452192.1 Y=8450997.8, H=990 (h=0), 6.X=4452130.0 Y=8450970.0, H=1004 (h=-0), 7.X=4452112 Y=8450907.0 H=1014 (h=0), 8.X=4452117 Y=8450886.0 H=1012 (h=0),

(տրված են WGS-84 (ՎԻ ՋԻ ԷՍ-84) (ARMREF 02) ազգային գեոդեզիական կոորդինատային համակարգով) կոորդինատներով եզրագծված 4.68 հա տարածքով:

2.Հանքի տարեկան արտադրողականությունը սահմանել՝ 15700 մ^3 բազալտի պաշար:

3. Ընդերքի գործակալության պետին՝

1) պատրաստել սույն հրամանի 1-ին կետում նշված՝ Սպանդարյանի տուֆերի և բազալտի հանքավայրի 3-րդ (բազալտի) տեղամասի օգտակար հանածոյի արդյունահանման նպատակով ընդերքօգտագործման թիվ Պ-570 պայմանագիրը (այսուհետ՝ պայմանագիր), ծանուցել դիմումատուին՝ 5 օրվա ընթացքում ընդերքօգտագործման իրավունքի տրամադրման պետական տուրքի վճարման մասին և հրավիրել վերջինիս 10-օրյա ժամկետում պայմանագիրն իր կողմից վավերացնելու մասին.

2) ընկերության կողմից պայմանագիրը վավերացվելուց հետո, 10 օրվա ընթացքում ընկերությանը տրամադրել օգտակար հանածոների արդյունահանման իրավունքը հավաստող փաստաթղթերի փաթեթը.

3) ծանուցել ընկերությանը, որ սահմանված ժամկետներում պայմանագիրն իր կողմից չվավերացնելու և ընդերքօգտագործման իրավունքի փաթեթը չստանալու դեպքում, արդյունահանման իրավունք հայցելու դիմումը բավարարելու վերաբերյալ սույն հրամանը կճանաչվի ուժը կորցրած.

4) ապահովել համապատասխան գրառումների կատարումը օգտակար հանածոների արդյունահանման իրավունքի հաշվառման գրանցամատյանում:

4. «Հանրապետական երկրաբանական ֆոնդ» ՊՈԱԿ-ի տնօրենին – ապահովել ֆոնդային փաստաթղթերում սույն հրամանից բխող համապատասխան գրառումների կատարումը՝ Ընդերքի գործակալության կողմից փաստաթղթերի փաթեթի ստացումից եռօրյա ժամկետում:

5. Սույն հրամանն ուժի մեջ է մտնում ստորագրման պահից և կարող է բողոքարկվել վարչական կամ դատական կարգով՝ ուժի մեջ մտնելու օրվանից 2 ամսվա ընթացքում:

6. Սույն հրամանի կատարման հսկողությունը վերապահել՝ ՀՀ էներգետիկ ենթակառուցվածքների և բնական պաշարների նախարարության աշխատակազմի ղեկավարին:

ԱՇՈՏ ՄԱՆՈՒԿՅԱՆ